ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ա. ԱՎԱԳՅԱՆ

01.09.2022թ.

# Բյուրեղավանի Ս. Վարդանյանի

# անվան ավագ դպրոցի

# 2022-2023 ուսումնական տարվա

# դասղեկի աշխատանքային պլան

# 11-րդ «Ա» դասարան

# Դասղեկ՝ Ս.Միքայելյան

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 16 հոգուց (9 աղջիկ և 7 տղա): Սովորում են ընդհանուր հոսքում, ունեն բավարար ընդունակություններ: Բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Աշակերտների մեծամասնությունը պատրաստակամ են, նախաձեռնող, ցուցաբերում են ակտիվություն: Կան նաև թույլ առաջադիմությամբ աշակերտներ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ:

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնական տարվա ընթացքում ծնողների հետ միասին հետևողական լինել ուսման առաջադիմությանը, հաճախումներին, ուշացումներին: Անբավարար գնահատական ունեցող աշակերտների հետ աշխատել առանձին թերությունները շտկելու նպատակով: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ՝ կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն: Երեխաների մոտ ներշնչել վստահություն և հավատ դասղեկի հանդեպ: Ձևավորել պատասխանատվության զգացում, հարգանք ուսուցիչների, մեծերի հանդեպ, լինել հանդուրժող: Ծնողների հետ կապը պետք է լինի ամուր արդյունքի հասնելու համար:

## 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### 3.1 Հոգևոր դաստիարակություն

Հաճախ կազմակերպել զրույցներ մեր հոգևոր արժեքների մասին, էքսկուրսիաներ դեպի հոգևոր-մշակութային կենտրոններ: Սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ձևավորել երեխաների մոտ գեղագիտական ճաշակ: Սերտ կապ պահպանել արվեստի օջախների հետ, բացատրել, թե ինչ մեծ դեր ունի գեղեցիկը մեր կյանքում: Հաճախ տանել պատկերասրահներ, ծանոթացնել մեր նկարիչների գլուխգործոցներին:

### 3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Կազմակերպել քննարկումներ, ֆիլմերի դիտում ռազմա-հայրենասիրական թեմայով: Պատմել մեր հերոսների սխրանքների մասին: Ակտիվ մասնակցություն ցուցաբերել դպրոցական ռազմա-հայրենասիրական միջոցառումներին: Կազմակերպել հանդիպումներ պատերազմի մասնակիցների հետ:

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Բացատրական աշխատանք տանել, որպեսզի աշակերտները հետևեն իրենց առողջությանը, վարեն առողջ ապրելակերպ, զերծ մնան անառողջ սնունդից, զբաղվեն սպորտով, չծխեն:

### 3.5 Աշխատանքային դաստիարակություն

Անհրաժեշտ է սովորեցնել աշակերտներին գնահատել ուրիշի աշխատանքը, լինել աշխատասեր: Աշակերտներին սովորեցնել ներկայիս դժվար պայմաններում գոյատևման

միջոցները: Ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը շաբաթօրյակներին, ձևավորել սեր աշխատանքի հանդեպ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Հաճախ կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկ: Ծանոթացնել բնապահպանական գլոբալ խնդիրներին: Հետևել բնության պահպանման կանոններին և տարածքը մաքուր պահել:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ընտանիքները պետք է սերտ կապ պահպանեն դպրոցի հետ: Պետք է հասկանալ, որ ընտանիքը պետության կորիզն է: Հորդորել ծնողներին ակտիվ մասնակցել ծնողական ժողովներին, օգնել դասղեկին լուծել առաջացած խնդիրները և հետևողական լինել իրենց երեխաների հանդեպ:

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարողներ |
|---|---|---|---|
| | 1-ին կիսամյակ | 2022-2023 | |
| 1 | Գիտելիքի օր. «Գիտելիքն ուժ է» | 2.09 | դասղեկ |
| 2 | Նոր ուս. տարվա խնդիրները | 9.09 | դասղեկ |
| 3 | Ինչպես ապրել կյանքը | 16.09 | դասղեկ |
| 4 | Զրույց. «Անկախության գինը» | 23.09 | դասղեկ |
| 5 | 44-օրյա պատերազմ. հանդիպում պատերազմի մասնակիցների հետ | 30.09 | դասղեկ, հյուրեր |
| 6 | Արտագաղթը չարի է | 07.10 | դասղեկ |
| 7 | Դժվարություններ, որոնց բախվում ենք | 14.10 | դասղեկ |
| 8 | Ու՞ր եմ գնալու սովորելու | 21.10 | դասղեկ |
| 9 | Անկեղծ ու ազնիվ հարաբերությունները մեր դասարանում. հանդուրժողականություն | 24.10 | դասղեկ |
| 10 | Սպորտով զբաղվելը նորաձևությու՞ն է, թե՞ առողջության գրավական | 11.10 | դասղեկ |
| 11 | Ո՞վ է իմ ընկերը, ինչպիսի՞ն պիտի լինի իրական ընկերը | 18.11 | դասղեկ, աշակերտներ |
| 12 | Փրկենք երկիր մոլորակը. մաքուր պահենք մեր շրջակայքը | 25.11 | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը. «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» | 2.12 | դասղեկ |
| 14 | Երկրաշարժի հիշատակի օր. «Երկրաշարժ» ֆիլմի դիտում | 9.12 | դասղեկ, աշակերտներ |
| 15 | Ճանաչիր քո հայրենիքը | 16.12 | դասղեկ |

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարողներ |
|---|---|---|---|
| | 2-րդ կիսամյակ | 2022-2023 | |
| 1 | 1-ին կիսամյակի ամփոփում. հուզող հարցերի քննարկում | 13.01 | դասղեկ |
| 2 | Իմ երազանքներն ու նպատակները | 20.01 | դասղեկ |
| 3 | Հայոց հզոր բանակ. մեր հերոսները | 27.01 | դասղեկ |
| 4 | Մեր ավանդույթները. Տյառնընդառաջ | 03.02 | դասղեկ |
| 5 | Ձմեռային օլիմպիական խաղեր. հայ հայտնի մարզիկներ | 10.02 | դասղեկ |
| 6 | Գրքի տոն. գրքերի նվիրում | 17.02 | դասղեկ, աշակերտ |
| 7 | Վատ սովորությունների հետևանքները | 24.02 | դասղեկ |
| 8 | Մայրության և գեղեցկության տոն | 03.03 | դասղեկ |
| 9 | «Ոչնչացման ենթակա չէ այն ազգը, որն ունի ամուր և կայուն դպրոց» (Գ.Նժդեհ) | 10.03 | դասղեկ |
| 10 | Լինենք հարգալից և կարողանանք լսել միմյանց | 17.03 | դասղեկ |
| 11 | Խոսք ես տվել, կատարիր | 24.03 | դասղեկ |
| 12 | Ինչպես պայքարել անտարբերության դեմ | 07.04 | դասղեկ |
| 13 | Ինչպես հասնել հաջողության | 14.04 | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| 14 | Մեծ եղեռն (1915թ.) | 21.04 | դասղեկ |
| 15 | Բնական աղետներ. արտակարգ իրավիճակներ | 28.04 | դասղեկ |
| 16 | Մեր բարեկամներն ու թշնամիները. հայ-ադրբեջանական հակամարտություն | 05.05 | դասղեկ |
| 17 | Հաղթանակի օրվան նվիրված դասղեկի ժամ | 12.05 | դասղեկ |
| 18 | Արդյո՞ք միշտ են ծնողները ճիշտ. քննարկում | 19.05 | դասղեկ |
| 19 | 2-րդ կիսամյակի ամփոփում | 26.05 | դասղեկ |

# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անկցկացման օրը, ամիսը, տարեթիվը | Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|
| Հոկտեմբեր 7, 2022 | Զրույց նվիրված ուսուցչի տոնին | Կատարված է |
| Հոկտեմբեր 23, 2022 | Աշնանային Էքսկուրսիա դեպի Գյումրի | Կատարված է |
| Նոյեմբեր, 2022 | Զրույց «Ինչպե՞ս հաղթահարել կոնֆլիկտները» թեմայով. կարևորել հանդուրժողականությունը հարաբերությունների մեջ | |
| Նոյեմբեր, 2022 | Այցելություն Լուսիկ Ագուլեցու տուն-թանգարան. ծանոթություն ազգագրական արվեստին: | |
| Դեկտեմբեր, 2022 | Զրույց «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես» թեմայով. կարևորել օտար լեզուների իմացությունը մեր օրերում | |
| Դեկտեմբեր, 2022 | Դիտել թատերական ներկայացում | |
| Հունվար, 2023 | Դասախոսություն «Աշակերտների իրավունքները և պարտականությունները» թեմայով | |
| Փետրվար, 2023 | Ինքնավերլուծության ձևավորում «Գնահատիր ինքդ քեզ» թեմայով | |
| Փետրվար 20, 2023 | Գիրք նվիրելու օր | |
| Մարտ, 2023 | Դասախոսություն «Ազգ և պետություն» թեմայով | |
| Մարտ, 2023 | Զրույց «Ինչպես վարվել աղբի հետ» թեմայով | |
| Ապրիլ, 2023 | Այցելություն Ծիծեռնակաբերդ հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան | |
| Ապրիլ, 2023 | Զրույց «Իմ ապագա մասնագիտությունը» թեմայով | |
| Մայիս, 2023 | Զրույց «Որտե՞ղ և ինչպե՞ս անցկացնել ամառային արձակուրդները» թեմայով | |
| Հունիս, 2023 | Դիտողական արշավ դեպի Իջևան (Առաքելոց վանք՝ Կիրանց) | |